Հավելված N 1
ՀՀ Հանրային հեռարձակողի խորհրդի
2020 թվականի սեպտեմբերի 7-ի N 36-Լ որոշման

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԲՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ
ՊԱՇՏՈՆԸ ՀԱՄԱԼՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանրային հեռարձակողի խորհուրդը հայտարարում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ:

ՊԱՀԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ

- բարձրագույն կրթություն (գերադասելի է նաև մեդիայի և/կամ լրագրության ոլորտի մասնագիտական վերապատրաստման դասընթացների մասնակցություն վերջին 10 տարում).
- առնվազն 5 տարվա աշխատանքի փորձ հեռուստատեսային արտադրության կազմակերպման և իրականացման ոլորտում.
- ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման և կառավարման հմտություններ.
- մեդիային վերաբերող ՀՀ օրենսդրության և իրավական ակտերի իմացություն.
- պետական կառույցների, միջազգային կազմակերպությունների և հանրության հետ հաղորդակցության, բանակցություններ վարելու, հրատապ և պատասխանատու որոշումներ ընդունելու ունակություններ.
- հայոց լեզվի գերազանց, անգլերենի և ռուսերենի բավարար իմացություն:

ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

ա) ուղեկցող (մոտիվացիոն) նամակ - (1 էջ).
բ) Հանրային հեռուստաընկերության զարգացման ծրագիր (հիմնադրույթներ) - (մինչև 5 էջ).
գ) ինքնակենսագրություն (մանրամասն).
դ) անձնագրի կամ նույնականացման քարտի պատճեն.

ե) բարձրագույն կրթությունը (հաղորդակցության, մեդիայի և/կամ լրագրության ոլորտի մասնագիտական վերապատրաստումը) հավաստող փաստաթղթերի պատճեններ.
զ) մասնագիտական գիտելիքներն ու գործնական հմտությունները հավաստող այլ փաստաթղթեր (հրապարակումներ, ինտերնետային աղբյուրների հղումներ, տեսալսողական կրիչներ).
է) երկու գունավոր լուսանկար՝ 3x4 չափսի:

ԺԱՄԿԵՏՆԵՐ

Փաստաթղթերը մրցույթի կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղարին են ներկայացվում մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարման օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում (մինչև սեպտեմբերի 18-ը ներառյալ) ժամը 11:00-ից մինչև 17:00 (բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի), Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. 010-57-85-02): Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում:
Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողովը փաստաթղթերն ընդունելու վերջին օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը և որոշում է ընդունում մրցույթում հաղթող ճանաչելու մասին: Անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է մրցույթի մասնակիցների հետ անցկացնել հարցազրույց:
Հաշվի առնելով մրցույթի մասնակիցների հնարավոր մեծ թիվը՝ մրցույթի մասնակիցների փաստաթղթերի ուսումնասիրման և մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշման ընդունման ժամկետը կարող է երկարացվել մինչև քսան աշխատանքային օրով: